ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 1

27.12.2022թ. կնքված N ՀՀՔԿ-ՀՄԱԱՇՁԲ-22/1 գնման պայմանագրի

ք. Երևան 10.02.2023թ.

Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտեն (այսուհետ՝ Պատվիրատու)՝ ի դեմս կոմիտեի գլխավոր քարտուղար Ա. Մկրտչյանի, որը գործում է կոմիտեի կանոնադրության հիման վրա, մի կողմից, և <<Թիվ 1 Շինվարչություն>> ԲԲԸ-ն (այսուհետ՝ Կապալառու), ի դեմս տնօրեն Հ. Մնացականյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից (երկուսը միասին՝ այսուհետ՝ Կողմեր), հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2022 թվականի դեկտեմբերի 29-ի N 2111-Ն որոշումը և <<Երևանի թենիսի և բադմինթոնի մանկապատանեկան մարզադպրոց>> համայնքային ոչ առևտրային կազմակերպության <<Կիլիկիա>> մարզադահլիճի շենքի հիմնանորոգման աշխատանքների կատարման համար Կողմերի միջև 27.12.2022թ. կնքված ՀՀՔԿ-ՀՄԱԱՇՁԲ-22/1 գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 8.5 և 8.14 կետերը, կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) հետևյալի մասին.

1. Համաձայնագրի առարկան

1.1 Կողմերը որոշեցին· հաստատել 2023 թվականի վճարման (ֆինանսական պարտավորությունների կատարման) ժամանակացույցը՝ համաձայն Համաձայնագրի հավելվածի:

2. Այլ պայմաններ

2.1 Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Համաձայնագրում կողմերի համար չնշված՝ Պայմանագրով նախատեսված իրավունքներն ու պարտականությունները մնում են անփոփոխ:

2.3 Համաձայնագիրը և հավելվածը բաղկացած են մեկական էջից, կնքվում են երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Համաձայնագրի հավելվածը համարվում է Համաձայնագրի անբաժանելի մասը: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

3. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ՝	ԿԱՊԱԼԱՌՈՒ՝
ՀՀ քաղաքաշինության կոմիտե	<<Թիվ 1 շինվարչություն>> ԲԲԸ
ք. Երևան, հանրապետության հրապարակ	ք. Գավառ Անդրանիկի 5
կառավարական տուն 3	<<Հայբիզնեսբանկ>> ՓԲԸ
ՀՀ ֆինանսների նախարարության	Հ/Հ 1150014871111107
աշխատակազմի գործառնական վարչություն	ՀՎՀՀ 08404037
Հ/Հ 900011041143	
ՀՎՀՀ 02565827	
Գլխավոր քարտուղար՝	Տնօրեն՝
_____ Ա. Մկրտչյան	_____ Հ. Մնացականյան
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված
27.12.2022թ. կնքված
N ՀՀՔԿ-ՀՄԱԱՇՁԲ-22/1 գնման պայմանագրի
10.02.2023թ. կնքված N 1 համաձայնագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

<<Երևանի թենիսի և բադմինթոնի մանկապատանեկան մարզադպրոց>> համայնքային ոչ առևտրային կազմակերպության <<Կիլիկիա>> մարզադահլիճի շենքի հիմնանորոգման աշխատանքների

ՀՀ դրամ

Աշխատանքի														
Հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	2022թ. վճարված գումարը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2023թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում՝										
				հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	45211131-2	<<Երևանի թենիսի և բադմինթոնի մանկապատանեկան մարզադպրոց>> համայնքային ոչ առևտրային կազմակերպության <<Կիլիկիա>> մարզադահլիճի շենքի հիմնանորոգման աշխատանքներ	222 000 000	-	228 339 300	228 339 300	375 040 500	375 040 500	375 040 500	375 040 500	375 040 500	375 040 500	375 040 500	375 040 500	375 040 500	375 040 500

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են ամբողջական կարգով:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ՝
ՀՀ քաղաքաշինության կոմիտե
ք. Երևան, հանրապետության հրապարակ
կառավարական տուն 3
ՀՀ ֆինանսների նախարարության
աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011041143
ՀՎՀՀ 02565827
Գլխավոր քարտուղար՝

_____ Ա. Մկրտչյան
(ստորագրություն)

Կ.Տ.

ԿԱՊԱԼԱՌՈՒ՝
<<Թիվ 1 շինվարչություն>> ԲԲԸ
ք. Գավառ Անդրանիկի 5
<<Հայբիզնեսբանկ>> ՓԲԸ
Հ/Հ 1150014871111107
ՀՎՀՀ 08404037

Տնօրեն՝

_____ Հ. Մնացականյան
(ստորագրություն)

Կ.Տ.

«ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ» ՓԲԸ
ЗАО «АРМБИЗНЕСБАНК»
"ARMBUSINESSBANK" CJSC

№ 716-02
«02» 02 2023

ԵՐԱՇԽԻՔ
(պայմանագրի ապահովում)

1.Սույն երաշխիքը (այսուհետ՝ երաշխիք) հանդիսանում է Հայաստանի Հանրապետության Քաղաքաշինության կոմիտեի (այսուհետ՝ բենեֆիցիար) և «ԹԻՎ 1 ՇԻՆՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ» ԲԲԸ (այսուհետ՝ պրինցիպալ) միջև կնքվելիք N ՀՀՔԿ-ՀՄԱՇՁԲ-22/1 պայմանագրից բխող պրինցիպալի պարտավորությունների (այսուհետ՝ երաշխավորված պարտավորություններ) կատարման ապահովում:

2.Երաշխիքով «ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ» ՓԲԸ (այսուհետ՝ երաշխիք տվող անձ) անվերապահորեն պարտավորվում է բենեֆիցիարի՝ սույն երաշխիքով սահմանված կարգով և ժամկետում ներկայացված պահանջով (այսուհետ՝ պահանջ) բենեֆիցիարին վճարել 38,310,510 (երեսունութ միլիոն երեք հարյուր տաս հազար հինգ հարյուր տաս) ՀՀ դրամ (այսուհետ՝ երաշխիքի գումար)՝ պահանջն ստանալուց հինգ աշխատանքային օրվա ընթացքում: Վճարումը կատարվում է բենեֆիցիարի 900008000664 հաշվեհամարին փոխանցման միջոցով:

3. Սույն երաշխիքն անհետկանչելի է:

4. Սույն երաշխիքից բխող բենեֆիցիարի՝ երաշխիքի գումարի վճարումը պահանջելու իրավունքը կարող է փոխանցվել այլ անձի երաշխիք տվող անձի գրավոր համաձայնության դեպքում:

5. Երաշխիքը գործում է բենեֆիցիարի և պրինցիպալի միջև կնքվելիք N ՀՀՔԿ-ՀՄԱՇՁԲ-22/1 պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև կնքվելիք պայմանագրով նախատեսված աշխատանքի կատարման վերջնաժամկետը, բայց ոչ ուշ քան 02.12.2024 թվականը: Սույն երաշխիքի բնօրինակից արտատպված տարբերակը երաշխիք տվող անձը երաշխիքը տրամադրելու օրը իր պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեից ուղարկում է նաև սույն երաշխիքի 1-ին կետում նշված պայմանագրի կնքման նպատակով կազմակերպված գնման ընթացակարգի հրավերում նշված՝ գնահատող հանձնաժողովի քարտուղարի էլեկտրոնային փոստի հասցեին:

6. Բենեֆիցիարը պահանջը ներկայացնում է երաշխիք տվող անձին գրավոր ձևով: Պահանջին կից ներկայացվում են հետևյալ փաստաթղթերը՝

1) N ՀՀՔԿ-ՀՄԱՇՁԲ-22/1 պայմանագրի, ներառյալ նաև դրանում կատարված փոփոխությունների, լրացուցիչ համաձայնագրերի պատճենները.

2) բենեֆիցիարի կողմից պայմանագիրը միակողմանի լուծելու մասին www.procurement.am հասցեով գործող տեղեկագրում հրապարակած ծանուցումը:

7. Երաշխիք տվող անձը բենեֆիցիարի կողմից ներկայացված պահանջը և կից փաստաթղթերը ստանալուց հետո առավելագույնը հինգ աշխատանքային օրվա ընթացքում քննարկում է ներկայացված պահանջը և կից փաստաթղթերը՝ սույն երաշխիքի պայմաններին դրանց համապատասխանությունը պարզելու համար:

8. Երաշխիք տվող անձը մերժում է բենեֆիցիարի պահանջը, եթե՝

1) պահանջը կամ կից փաստաթղթերը չեն համապատասխանում սույն երաշխիքի պայմաններին.

2) պահանջը ներկայացվել է երաշխիքով սահմանված ժամկետի ավարտից հետո:

9. Երաշխիք տվող անձը պահանջը մերժելու և/կամ բավարարելու մասին որոշում ընդունելու դեպքում անհապաղ, բայց ոչ ուշ, քան նույն աշխատանքային օրը, մերժման և/կամ բավարարման մասին տեղեկացնում է բենեֆիցիարին:

10. Սույն երաշխիքի նկատմամբ կիրառվում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի համապատասխան դրույթները:

11. Սույն երաշխիքի կապակցությամբ ծագող վեճերը ենթակա են լուծման Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

Վարչության նախագահ՝ Ա. Խաչատյան

Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, 0010 Նալբանդյան 48: Հեռ.՝ (+37410) 59 20 20, (+37460) 37 25 00: Էլ. փոստ՝ info@armbusinessbank.am, Կայք՝ www.armbusinessbank.am
Адрес: РА, г. Ереван, 0010, Налбандян 48, Тел: (+37410) 59 20 20, (+37460) 37 25 00; Эл. почта: info@armbusinessbank.am; Веб-сайт: www@armbusinessbank.am
Address: Armenia, Yerevan, 0010, 48 Nalbandyan Street; Tel: (+37410) 59 20 20, (+37460) 37 25 00; E-mail: info@armbusinessbank.am; Website: www@armbusinessbank.am